ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Ապրիլի 7-ին Սուրբ Աստվածածնի ավետման և Մայրության ու գեղեցկության տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել կանանց ու մայրերին:

Հայրապետական ուղերձում ասվում է.

«*Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը, շնորհավորանքը և բարեմաղթանքներն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի և կանանց ու մայրերին՝ Մայրության և գեղեցկության օրվա առիթով:*

Մայրական հոգատարության, սիրո և նվիրումի հիանալի օրինակ է Սուրբ Աստվածածինը բոլոր կանանց համար՝ արդյունավորելու իրենց բացառիկ դերն ու կոչումը ընտանիքի, ազգի և Հայրենիքի կյանքում:

Աղոթում ենք, որ Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ Տերը օրհնի բոլոր կանանց և մայրերին՝ սիրառատ ոգով իրականացնելու բարի առաքելությունը՝ դաստիարակելու ազնիվ և առաքինազարդ զավակներ, նրանց կրթելու քրիստոնեական սուրբ արժեքների հանդեպ հավատարմության մեջ: Թող Տերը շնորհազարդի տիկնանց և օրիորդաց և պահի ու պահպանի Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ